



**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ  
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՍԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ.  
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ**

(1971 թ. հունվարի 6)

Յանուն Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ, ա-  
մէն:

Սիրեցյալ հավատացյալ ժողովուրդ մեր  
որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի:

Տիրոջ ողորմությամբ, կանգնած ահա նոր  
տարվո շնմին, մեր լուս հավատքի խորան  
սուրբ Էջմիածնեն, ձեզի բոլորիդ կրերենք  
ավետիսը երկնքի հրեշտակներու՝

«Փառք ի բարձունք Աստուծոյ, և յերկիր  
խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Աստված, խաղաղություն, բարի կամեցո-  
ղություն:

Ահավասիկ երեք մեծ զաղափարներ, ո-  
պոնք կրովանդակնեն ամրող խորհուրդը  
սուրբ Ծննդյան: Եվ կխորհինք սիսալած շը-  
լալ, այս զաղափարներու իմաստափրումը  
տեսնելով սուրբ Երրորդության մեր դավա-  
նության մեջ, քանի որ Փրկիչը մեր Քրիս-  
տոս կհավանինք իբրև «Եշխան խաղաղու-  
թեան» և սուրբ Հոգին՝ իբրև Աստուծո բարի  
կամքը որ կներգործե մարդկային աշխար-  
հին մեջ:

Այս սուրբ ժամին, Մեր աղոթքն է որ նա-  
խախնամողն Աստված ավելի լուս և ավելի  
հոգվո գորություն շնորհի իր արարածներուն  
բոյոր, որպեսզի անոնք առավել վճիռ հա-  
կընան իր բարի կամքը ու առավել վճուա-

կանորեն ի կատար ածեն զայն իրենց կյան-  
քին մեջ, երկրի վրա:

Խաղաղության և ի մարդիկ հաճության  
աստվածային պատգամի պվետումեն, ահա  
երկու հազար տարիներ հետո, մարդոց աշ-  
խարհին մեջ տակավին կան պատերազմ-  
ներ, կան անարդարություններ, կան ազգա-  
միջյան թշնամություններ, կան ցեղային  
խտրություններ, կան հաղածանքներ ու ա-  
զան շահագործումներ, կան ոչ բարի կամե-  
ցողության բազում ձգտումներ ու գործեր  
մարդկային, ընկերային և միջազգային  
կյանքին մեջ:

Այս ողբերգական կացությունը, մենք՝  
քրիստոնյաներս, կմերժենք ընդունի որպես  
ճակատագիր: Մենք կհավատանք Աստուծո  
արարչագործ զորության և Անոր նոյնքան  
արարչագործ բարի կամքին, որոն ճառա-  
գայց մը կշողա մարդուն հոգիին մեջ, իբրև  
շնորհ փրկարար ու ստեղծարար: Այդ ճառա-  
գայթով, այդ լուսով է որ մարդկությունը ամ-  
բողջ իր պատմության ընթացքին ոգեշրնչ-  
ված է ճշմարիտին, բարիին ու գեղեցիկին  
տեսիլքով, ու նաև սրբանալու, անմահանա-  
լու հուսով, և հերոսական անդուլ ապարար  
մոած է հանուն այդ իդեալներու կենսագործ-  
ման: Ճշմարիտ է թե այդ հերոսական պայ-  
քարին մեջ, հաճախ ավելի զորավոր հանդի-

սացած են հսակեդրոն բնագդները, քան իդեալին ձգտող տենչերը, սակայն այնուամենայնիվ, անոնք, այդ տենչերը երբեք չեն չքացած մարդու սրտեան: Տերը երբեք չէ լրած իր արարածները: Խավար ու դաման ժամանակներու մեջ, իդեալին ձգտող տեսիթերը միշտ ստաշնորդած են մարդոց մանավանդ ընտրյաներն, և ցուց տված ուղիղ ճանապարհը, և օգնած անոնց որ անճահանց պատրարը շարունակեն՝ բարձրանալու համար վեր, միշտ ավելի վեր մարմնի և նյութի պայմաննեն:

Պատմությունը ամբողջ պատմությունն է ոգեկան, իմացական ուժերու բացահայտման և զարգացման: Մարդկային քաղաքակրթության ու բարոյական զարգացման պատմական մրրկալի ընթացքը, դյուցազերգությունն մը է որուն մեն մի հնչյունը ծնունդ է առած անցուալ սերունդներու սրտերու տրոփունեն, իդեալական բարիքները, արժեքներ ստեղծելու անոնց հզոր մղումնեն:

Մեզի, հայերու համար ալ փառքի անկորչելի տիտղոս մըն է այն իրողությունը որ մեր ազգի և սուրբ եկեղեցի բազմադարյան պատմությունը, Վավերական դյուցազերգությունն մը կանադիսանա՝ հանուն Քրիստոսի Ավետարանին, հանուն արդարության և ազատության, Հայոց աշխարհին մեջ լիությամբ կենսագործումովը ճշմարտին, բարին ու գեղեցիկին:

Հետևաքար, մարդիկ Արարչին ամենահարազատ գործակիցները կղանան, իրենց անհատական ու ընկերային կանչերին մեջ ազատ ճանապարհ տալով Անոր բարի կամքի ճանազարդին, Ավետարանի լուսին, որով կրոսավորվի իրեն հողեղեն բնությունը, կոդեկինանան խավար ու անձն ուժերը հյութեղեն մարմնույն, իմաստ ու բարոյական վեհություն կատանան մարդկային կանչըն ու պատմությունը: Մեր բոլորի իդան է, և սպասում մարդկային բազմություններու, որ այս ուժերը և պատմությունը վերջնապես մտնեն հավասարակշիռ ու ներդաշնակ զարգացման հուն մեջ, ըստ հմանության աստվածադիր տեսքերական ներդաշնակության օրենքին:

Մեր մադթանքն ու սպասումն է մանավանդ որ Տերը իր փոկարար օգնականությունը հասցեն իր իսկ հիմնած ու զիսավորած եկեղեցին, անոր խորհրդավոր մարմնը կազմող բոլոր քրիստոնեական եկեղեցներուն և անոնց սպասավորներուն, որպեսի մեր օրերու աշխարհին մեջ անոնք հզորապես հնչեցնեն պատզամը երկներին, պատզամը խաղաղության, պատզամը բարի կամեցության:

Քրիստոնյայի համար չկա ավելի նվիրական առաքելություն: Մեր ըմբռնումով հնա-

րավոր չէ այլ կերպ հասկնալ և կամքի կոչել Քրիստոսի Ավետարանը, այսօր, երբ մարդկությունը համայն, կանգնած է աշխարհական հրդեհումներու անարկու վտանգին առջև: Ամեն պատերազմ ժխտումն է Քրիստությն ու Անոր սուրբ Ավետարանին:

Արդ, բոլոր եկեղեցները և բոլոր կրոնները կարող են և պարտին մեկնելովին, եղայրական և միասնաբար քարոզել ու զործել համուն աշխարհի խաղաղության, համուն ժողովորդներու բարեկամության, համուն պետություններու համերաշխ զործակցության:

Վերջին տասնամյակներուն, եկեղեցիներու միջև զարգացող եկումենիկ շարժումը, կյուրինիք թէ ամեն բան վեր պետք է դավանի այս առաքելությունը, անոր կենապորման մեջ տեսնելով ճշմարիտ, իրական ու գործնական միությունը Քրիստոսի սիրույն մեջ և նույնական ճշմարիտ, իրական ու գործնական ճանապարհը աստվածապաշտության և հոգիներու փրկության:

Այս էր նաև, Մեր կարծիքով, խոր իմաստն ու արժեքը անցրալ մայմին Մեր պատմական այցին Հոռոմ, Նորին Սրբություն Պողոս Զ Քահանապատետին, որոն հոգվուց մեջ Մենք տեսաքը, զգացինք ճառագայթումը իրավ բարի կամեցության և անարատ սիրո:

Մեր ջերմագին իդան է նույնական, որ մեր սուրբ եկեղեցվու ծոցին մեջ այլև վերջ գրտենք ամեն իմաստե դատարկված անշատությունները, և շատ ժամանակ չանցած՝ կարողանանք վերականգնած տեսնել միությունը մեր եկեղեցին ու անոր նվիրապետության և հոգևոր միահնությունը մեր հավատացյալ պանուստ ժողովորդին, աստվածակառուց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի գերագույն հնկունակության և օրինության ներքեւ: Յանկալի է և սպասելի որ բոլորի համար անխրատիր լսելի դատեան ու հարգվին՝ Ամենայն Հայոց Հայրապետի հորդորն ու պատզամը օրինականության, միության և համերաշխ զործակցության:

Օրերելի հայաստանցի ժողովորդ և նույնական սիրելի զավակներ Մեր որ ի սփյուս աշխարհի, սուրբ և լուսաշող Ծննդյան և Աստվածահայտնության ուրախությունը Մեր սրտի մեջ, ձեզի ամենուդ կրերենք Մեր շնորհավորանքի խոսքը և Մեր հայրական օրինությունը՝ ի բարի մաղթանքներով, որ ձեր կանչերի պայմաններուն մեջ բոլոր ապրիք ու զորանար ամուր կանգնած մեր հայսենաց հավատքի ժայռին վրա, միշտ անշեղորեն հավատարիմ մեր եկեղեցվու կարգ ու կանոնին, մեր նվիրական ավանդությանց,

մեր հոգևոր ու ազգային մշակույթի ժառանգույթանց, որոնք ամենավավերական ու պահանջանական վկացությունը կհանդիսանան հայոց քրիստոնեական հավատքին և ամենաապահով ու անփոխարինելի գրավականները մեր նոր սերունդներու քրիստոնեական և հայկական հոգվույն անաղարտ պահպանան, ինչպես և մեր առաքելական սուրբ եկեղեցվոր գոյաւուման ու ծաղկման:

Նոր տարվու ապս լուսաբացին, ձեր Հայրապետը, բազմադարյան սուրբ Էջմիածնի հոգևոր բարձունքնեն, իր հայացքը սևեռած մեր ազգի սրբազն լերան՝ Արարատի ալեփառ կատարին և հայրենի հրաշալի վերածնության հազար-հազար լուսերուն, անհումարեն միմիթարված, փառք կու տա

պարզեատու բարյաց մեր Աստուծուց և ծընկաշոր կաղոթե որ դադրին պատերազմները, որ վերանան անարդարությունները, որ չըքանան թշնամությունները, և մարդիկ ու ծողովորդներ ողջունեն նոր դարաշրջանը խաղաղ գոյակցության և բարի կամեցողության:

Հարազատներ Մեր, ցնծացեք և ուրախ եղեք, հույսով խնդացեք ու հավատքով զորացեք, զի՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցա», «զի թէպէս և երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ի Տէր, իբրև զորդիս լուսոյ գնացեք, զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է և արդարութեամբ և ճշմարտութեամբ» (Եփես. Ե 8—9):

Ընորհավոր Նոր տարի և Հայտնություն Որդիվոյն Աստուծո, ամեն:

